**Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության առարկությունների և բացատրությունների հասցեագրում**

**Ծրագրային կետ՝** Չափագիտության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի կատարողականի հաշվեքննություն:

| **Առարկություն և բացատրություն** | **Հաշվեքննության արդյունքներում իրականացված փոփոխությունների նկարագրություն** | **Հիմնավորումներ** |
|---|---|---|
| **1.1** Ս. թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ միջոցառման կատարումը %-ային ներկայացմամբ գնահատվել է 58.3 %. Այս առումով անհրաժեշտ է ավելացնել նաև, որ ս.թ. հոկտեմբերի 2-ի դրությամբ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 2-ի 126 հրամանով (կցվում է) ճանաչվել են 8-րդ և 9-րդ էտալոններ, ինչը կարելի է փաստել որպես միջոցառման կատարման տոկոսային աճ ևս 16,7%-ով: | Ընթացիկ եզրակացության կից հավելված 1-ի 1.1 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է հետևյալ պարբերությամբ՝ «Աշխատանքները կատարված են ոչ ամբողջական (մասնակի)»: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները: |

| | | |
|---|---|---|
| **1.2** «Չափագիտության զարգացման **ծ**րագրով սահմանված արդյունաբերական էտալոնային կենտրոնի հիմնում»-ը ենթադրում է չափագիտական տարբեր ուղղություններով տրամաչափարկման ծառայություններ մատուցող, համապատասխան ենթակառուցվածքով համալրված կենտրոնի առկայություն, ինչն ըստ էության ապահովված է, մասնավորապես, Համաշխարհային Բանկի ԱԽՌԵ ծրագրի շրջանակներում վերանորոգվել են 6 լաբորատորիաների տարածքներն իրենց աշխատասենյակներով հիմնանորոգվել են: Դա է փաստում նաև ԵՄ ֆինանսավորմամբ UNIDO կողմից իրականացվող ծրագրի | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 1.2 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է հետևյալ պարբերությամբ «Կենտրոնը հիմնված չէ: 4 ազգային էտալոնները տես կետ 1.1, Մնացած 8 ազգային էտալոններից հիմնված է 2-ը՝ աշխատանքները կատարված են ոչ ամբողջական (մասնակի)»: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները:<br><br>Միայն 6 լաբորատորիաների տարածքների հիմնանորոգումը չի կարող ենթադրել արդյունաբերական էտալոնային կենտրոնի հիմնում, պետք է լիարժեք գործեն այդ բոլոր լաբորատորիաները: Հետևաբար պետք է արձանագրենք, որ արդյունաբերական էտալոնային կենտրոնի հիմնման գործընթացն ավարտված չէ: Քանի որ կատարողականը գնահատվել է մինչև ս.թ. հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածը, հետևաբար այդ ժամանակահատվածից հետո 8-րդ և 9-րդ էտալոնների ճանաչման հանգամանքը չի կարող ազդել 8 ազգային էտալոնների ճանաչման մասով կատարողականի գնահատականի վրա: |

| | | |
|---|---|---|
| մեկնարկը, ինչը պայմանավորված է եղել նաև համապատասխան փորձագետների կողմից շենքային/սենքային պայմանների վերլուծությամբ: Հետևաբար արդյունաբերական էտալոնային կենտրոնի հիմնման մասով կատարված աշխատանքների կատարողականը կարելի է դիտարկել 100%: Սույն աղյուսակի 1-ին կետի հիմնավորմամբ ներկայացվել է ս.թ. հոկտեմբերի 2-ի դրությամբ կատարողականը, որով ապահովվել է 8 ազգային էտալոններից 4-ի ճանաչումը, հետևաբար 8 ազգային էտալոնների ճանաչման մասով կատարողականը կարելի է դիտարկել 50 %: | | |
| **1.3** Սույն աղյուսակի 1-ին կետով ներկայացված հիմնավորմանը զուգահեռ | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 1.3 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված |

| | | |
|---|---|---|
| հարկ է հաշվի առնել, որ ծրագրի համապատասխան կետում նշված չէ, թե հաշվետու ժամանակահատվածում քանի ազգային էտալոնի գիտական պահապան պետք է նշանակվի: Այնուհանդերձ, բոլոր ճանաչված ազգային էտալոնների համար նշանակված են գիտական պահապաններ, որոնց իրավական հիմք հանդիսացող հրամանները կցվում են: Հետևաբար, կատարողականը կարելի է դիտարկել 100 %: | խմբագրվել է հետևյալ պարբերությամբ «Աշխատանքները կատարված են»: | բացատրությունները: |
| **2.1** Հարկ է նշել, որ փուլային առումով իրականացվել են լայնածավալ և ժամանակատար աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են տրամաչափարկման լաբորատորիաների միջազգային ճանաչման գործընթացի մեկնարկի և հետագա քայլերի համար, | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 2.1 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է հետևյալ պարբերությամբ «Աշխատանքները կատարված են ոչ ամբողջական»: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները:<br><br>ՔՈՎԻԴ համավարակի խուչընդոտ հանդիսանալու հանգամանքը պետք է որ հայտնի լիներ ավելի վաղ (ՀՀ ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 298-Ն որոշումը ընդունվել է 16.03.2020թ.-ին, իսկ Ծրագիրը՝ 13.08.2020թ-ին), հետևաբար, ծրագրով նախատեսված |

| | | |
|---|---|---|
| մասնավորապես,<br>1. լաբորատորիաների հիմնում, որը տվյալ գործընթացը ներառում է տարածքների վերանորոգման, սարքավորումների ձեռքբերման, տեղադրման, կարգաբերման, գործարկման և նման այլ գործընթացներ,<br>2. միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգի ներդաշնակեցում և ընդունում,<br>3. տրամաչափարկման մեթոդների մասով և ըստ հավատարմագրման ուղղությունների՝ չափագիտության ոլորտի անձնակազմի տեսական և գործնական վերապատրաստում,<br>4. իրականացվել են նաև անորոշությունների հաշվարկման և | | միջոցառումների կատարման վերջնաժամկետները հստակեցնելիս, պետք է հաշվի առնվեին այդ հանգամանքները: |

| | | |
|---|---|---|
| լաբորատորիաների անորոշությունների բյուջեի գնահատման մասով դասընթացներ,<br>5. տեղի են ունեցել որակի կառավարման և որակի կառավարման առանձին տարրերի վերաբերյալ վերապատրաստումներ,<br>6. իրականացվել է տրամաչափարկման աշխատանքների գնահատում, որի արդյունքում լաբորատորիաները հավատարմագրվել են Հավատարմագրման ազգային մարմնի կողմից,<br>7. միջազգային փորձագետների կողմից միջազգային հավատարմագրման գործընթացին օժանդակելու նպատակով իրականացվել է լաբորատորիաների որակի համակարգի գնահատում:<br>8. իրականացվել է | | |

| | | |
|---|---|---|
| միջլաբորատոր համեմատություն Վրաստանի ստանդարտների և չափագիտության ազգային գործակալության հետ՝ դրական արդյունքներով, որը միջազգային հավատարմագրման ևս մեկ պահանջի ապահովում է,<br>9. ընթացքի մեջ են և իրականացվում են Գերմանիայի «Ֆիզիկա-տեխնիկական դաշնային ինստիտուտ» (PTB)-ի հետ համատեղ Որակի կառավարման համակարգի գնահատման աշխատանքները՝ առավել բարձրացնելու միջազգային ճանաչման գործընթացի հնարավորությունները.<br>10. ընտրվել է միջազգային հավատարմագրումն ապահովող Իտալիայի հավատարմագրման ազգային մարմինը և ստացվել է | | |

| | | |
|---|---|---|
| գնառաջարկ.<br>11. միջազգային հավատարմագրման ֆինանսավորումն ապահովելու նպատակով կազմվել է եռակողմ պայմանագիր, որը քննարկման փուլում է (Փոխվարչապետի գրասենյակի հետ): Պայմանագրի ստորագրումից և ֆինանսավորման իրավական հիմքերն ապահովելուց հետո՝ կմեկնարկի միջազգային հավատարմագրման գործընթացը: Ներկայացվածի համատեքստում նկարագրված լայնածավալ աշխատանքները չեն կարող դիտարկվել 0 %, քանի որ որպես վերջնական արդյունք դիտարկվող «միջազգային ճանաչման» գործընթացը մեկը չէ, այլ գործողությունների համախումբ: Հետևաբար, | | |

| | | |
|---|---|---|
| նախընտրելի կլիներ միջոցառման գնահատման ժամանակ հաշվի առնել համախմբում կատարված աշխատանքների մասնաբաժինը՝ համապատասխան %-ային արտահայտությամբ: | | |
| **3.** Միջոցառման կատարված աշխատանքների գնահատման մեթոդաբանությամբ կիրառվել է վերապատրաստվող աշխատակիցների հարաբերակցությունն ընդհանուր անձնակազմի հետ ճնաչափը, մինչդեռ, միջոցառմամբ նախատեսվող վերապատրաստումների իրականացման ապահովումը վերաբերելի է չափագիտության ոլորտի անձնակազմին: Միաժամանակ հարկ է հաշվի առնել, որ չափագիտության զարգացման ծրագիրն ամբողջությամբ վերաբերվում է | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 3-րդ կետի 7-րդ սյունակում (Արձանագրության Աղյուսակ 2) <<Կատարված աշխատանքները ներկայացված են ստորև.<br>ՍՉԱՄ-ի անձնակազմի թվաքանակը ՝<br>31.12.2020թ-ի դրությամբ՝ 184 աշխատող, վկայագրված և վերապատրաստված աշխատող՝ 47 կամ 25.5%,<br>31.12.2021թ -ի դրությամբ՝ 184 աշխատող, վկայագրված և վերապատրաստված աշխատող՝ 15 կամ 8.1%,<br>31.12.2022թ -ի դրությամբ՝ 177 աշխատող, վկայագրված և | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները: |

| | | |
|---|---|---|
| չափագիտության ոլորտին և մեթոդաբանությամբ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ամբողջ անձնակազմի դիտարկումը գտնում ենք ոչ նպատակահարմար: Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ գնահատման մեթոդաբանության մեջ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի սպասարկող, վարչական, ստանդարտացման, փորձարկման լաբորատորիաների անձնակազմին ևս ընդգրկելը հիմնավոր չէ: Սույն միջոցառման կատարման մասով ներկայացված հիմնավորման համատեքստում չափագիտության ոլորտի աշխատակազմի մասով առկա է հետևյալ պատկերը. | վերապատրաստված աշխատող՝ 29 կամ 16.3%, 30.09.2023թ-ի դրությամբ՝ 176 աշխատող, վկայագրված և վերապատրաստված աշխատող՝ 82 կամ 46.6%>> պարբերությունը փոխարինվել է <<Աշխատանքները կատարված են>> բառակապակցությամբ: | |

| | | |
|---|---|---|
| 1. 2020 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի չափագիտության բլոկում աշխատել են 80 մասնագետ, որից 47 մասնագետի ստուգաչափողի վկայագրերի ժամկետը լրանում էր 2020 թվականին, քանի որ ամբողջ չափագիտական անձնակազմը նախորդ անգամ վկայագրվել էր 2017 թվականին: 2020 թվականին բոլոր 47 մասնագետներն անցել են համապատասխան ուսուցում և ստացել վկայագիր՝ 3 տարի ժամկետով: Այս պարագայում կատարողականը 100% է:<br>2. 2021 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում չափագիտության բլոկում աշխատել է 80 մասնագետ, որից 5 մասնագետի | | |

| | | |
|---|---|---|
| ստուգաչափողի վկայագրերի ժամկետը լրանում էր 2021 թվականին: 2021 թվականին բոլոր 5 մասնագետներն անցել են համապատասխան ուսուցում և ստացել վկայագիր՝ 3 տարի ժամկետով: Կատարողականը 100%:<br>3. 2022 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում չափագիտության բլոկում աշխատել է 73 աշխատակից, որից աշխատակցի ստուգաչափման վկայագրերի ժամկետը լրանում էր 2022 թվականին: 2022 թվականին բոլոր 15 մասնագետներն անցել են համապատասխան ուսուցում և ստացել վկայագիր՝ 3 տարի ժամկետով: Կատարողականը 100%:<br>4. 2023 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային | | |

| | | |
|---|---|---|
| մարմին» ՓԲԸ-ում չափագիտության բլոկում աշխատել է 72 մասնագետ, որից 45 աշխատակցի ստուգաչափողի վկայագրերի ժամկետը լրանում է 2023 թվականին: 2023 թվականին բոլոր 45 մասնագետներն անցել են համապատասխան ուսուցում և ստացել վկայագիր՝ 3 տարի ժամկետով: Կատարողականը 100%:<br>Բացի այդ, 2020 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ից այլ թեմաներով վերապատրաստվել են 2 մասնագետ, 2021 թվականին՝ 25, 2022 թվականին՝ 21, 2023 թվականին՝ 38 մասնագետ:<br>2022 թ-ի մարտ–մայիս ամիսներին կազմակերպվել է նաև «Ստանդարտացման և չափագիտության ընդհանուր հիմունքներ թեմայով | | |

| | | |
|---|---|---|
| դասընթացներ: Մասնակցել է 167 աշխատակից: Միաժամանակ մասնակցություն է ապահովվել բազմաթիվ օնլայն վերապատրաստումների, որոնք փաստաթղթավորված չեն: | | |
| **4.** Միջոցառման կատարումն ապահովելու համար իրականացվել են լայնածավալ միջոցառումներ, այդ թվում՝<br>1. բազմիցս անցկացվել են հանդիպումներ և բանակցություններ ՕՉՄԿ և ՉԿՄԲ կառույցների ներկայացուցիչների հետ,<br>2. իրականացվել է «ծախս և արդյունք» վերլուծություն,<br>3. քննարկվել են անդամակցության բոլոր հնարավոր տարբերակները և հեռանկարները:<br>4. հաշվետու ժամանակահատվածում | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 4 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները:<br>Ծրագրով առանձին միջոցառումների կտրվածքով հստակեցված չեն գործողությունների հետևողական քայլերը, ճանապարհային քարտեզը, որով և հնարավոր կլիներ գնահատել հիշատակված կետերով նկարագրված աշխատանքները: Փաստացի՝ ՕՉՄԿ անդամակցությունը կատարված չէ: |

| | | |
|---|---|---|
| անդամակցության գործընթացի կազմակերպման համար իրականացվել է միջոցառման ապահովմանը միտված լայնածավալ աշխատանքների համախումբ, ներառյալ՝<br>• հիմնվել են տրամաչափարկման լաբորատորիաներ,<br>• ճանաչվել են ազգային էտալոններ<br>• համապատասխան գրություններ են ներկայացվել Վարչապետի աշխատակազմ, Արտաքին գործերի և ֆինանսների նախարարություններ (դեռևս հուլիսին),և, հոկտեմբերի 2-րդ տասնօրյակին ԱԳՆ պատասխան գրությամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա պատրաստվել է անդամակցությանն ուղղված ՀՀ կառավարության որոշման | | |

| | | |
|---|---|---|
| նախագիծ և դրվել շրջանառության մեջ: Հետևաբար գնահատման մեթոդաբանության մեջ անհրաժեշտ է հաշվի առնել նշյալը ևս: | | |
| **4.2** COOMET-ի անդամ են 17 երկիր, ուստի ազգային չափանմուշների համեմատությունների կազմակերպումն ու անցկացումը ժամանակատար գործընթաց է, որը ներառում է չափումների 10 տարբեր ոլորտներ: Պլանավորված համեմատությունները հրապարակված են կայքում՝ COOMET Comparison Program http://coomet.org/tc_prj/2023/D 9_RU.htm# Այնուամենայնիվ, Ազգային չափանմուշների ճանաչման պահից «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ մասնակցում կամ գրանցված է COOMET-ի | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 4.2 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները: Ծրագրով առանձին միջոցառումների կտրվածքով հստակեցված չեն գործողությունների հետևողական քայլերը, ճանապարհային քարտեզը, որով և հնարավոր կլիներ գնահատել հիշատակված և նկարագրված աշխատանքները: Փաստացի՝ ԿՕՕՄԵՏ-ի նախաձեռնությամբ թվով 7 ճանաչված էտալոններից համեմատություն չի կատարվել:: |

| | | |
|---|---|---|
| բոլոր հնարավոր համեմատություններում:<br>ՍՉԱՄ-ն արդեն իսկ մասնակցում է հետևյալ փորձնական համեմատությանը.<br>1. «Թվային ջերմաչափերի փորձնական համեմատություններ»<br>Կոդ՝ 890/KZ/23, http://coomet.org/DB/isapi/isapi.dll<br>Գրանցվել է հետևյալ փորձնական համեմատություններին մասնակցելու համար.<br>2. Պիլոտային համեմատություններ ապակե ջերմաչափերի տրամաչափման ոլորտում<br>Կոդ՝ 885/BY/23<br>Ջերմաչափություն և ջերմաֆիզիկա, http://coomet.org/DB/isapi/isapi.dll<br>3. «Լրացուցիչ | | |

| | | |
|---|---|---|
| համեմատություններ զանգվածի չափումների ոլորտում 1 մգ-ից մինչև 5 կգ միջակայքում».<br>Կոդ՝ 892/RU/23, http://coomet.org/DB/isapi/isapi.dll<br>«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ը հետևում է կազմավորվող ծրագրերի թեմաներին, նաև այլ չափագիտական հարթակներում և ծրագրերի շրջանակներում:<br>Անկախ COOMET-ի համեմատությունների ծրագրից, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ը կազմակերպել և մասնակցել է երկուստեք/բազմակողմ կազմակերպված ջերմաստիճանի և զանգվածի չափման միջոցների համեմատություններին | | |

| | | |
|---|---|---|
| Վրաստանի չափագիտության ազգային ինստիտուտի հետ: 27.11.2023 թվականին Վրաստանի չափագիտության ինստիտուտից ստացվել է նաև զանգվածի միջլաբորատոր համեմատությունների արդյունքները, որոնք ևս դրական են: | | |
| **5-5.1** Միջլաբորատոր համեմատությունների ոլորտով հավատարմագրում ՀՀ-ում չի իրականացվել և այդ ոլորտով ծառայություն որևէ կազմակերպություն մինչ օրս չի մատուցել: Հետևաբար, Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրման վերաբերյալ քաղաքականություն մշակված չի եղել: «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն 2023 | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 5-5.1 կետերի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները:<br>Ծրագրով առանձին միջոցառումների կտրվածքով հստակեցված չեն գործողությունների, գործընթացների հետևողական քայլերը, ճանապարհային քարտեզը, որով և հնարավոր կլիներ գնահատել հիշատակված և նկարագրված աշխատանքները: Ավելին՝ 20.11.2023թ. դրությամբ Հայտի Լրամշակված փաթեթը ներկայացվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին, այսինքն, դեռևս ավարտված չէ: Նախատեսված աշխատանքները փաստացի կատարված չեն: |

| | | |
|---|---|---|
| թվականի հունվար ամսին դիմել է ՀԱՄ-ին համապատասխան քաղաքականություն մշակելու և տեղեկատվական աջակցություն տրամադրելու խնդրանքով: Արդյունքում 21.07.2023 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն հավատարմագրման հայտ է ներկայացրել: ՀԱՄ-ի կողմից հայտը և կից փաստաթղթերը ուսումնասիրվելուց և նախնական գնահատելուց հետո հետ են վերադարձվել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ին լրամշակման նպատակով սույն թվականի հոկտեմբերի 10-ին: | | |

| | | |
|---|---|---|
| Լրամշակված փաթեթը 20.11.2023 թվականին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին: Չանդրադառնալով գործընթացի բաղկացուցիչ մաս հանդիսացող գործողություններին՝ հայտնում ենք, որ միջոցառման վերջնական արդյունքը մեկ գործընթաց չէ, այլ գործընթացների համախումբ է, որի կատարումն է ապահովում վերջնական արդյունք: Հետևաբար, նախընտրելի կլիներ գործողությունների համախմբում գնահատել կատարված աշխատանքի մասնաբաժինը՝ վերագրելով | | |

| | | |
|---|---|---|
| համապատասխան %: | | |
| **7.3-7.6** Թվարկված լաբորատորիաների հիմնումը ենթադրում է չափագիտական նշված 4 ուղղություններով տրամաչափարկման ծառայությունների մատուցման համար համապատասխան ենթակառուցվածքներով (համապատասխան վերանորոգված տարածք/սենք, սարքավորումներ, վերապատրաստված մասնագետներ՝ միջազգային 17025 ստանդարտի պահանջներին համապատասխան) համալրված լաբորատորիաների առկայություն: Միջոցառումների կատարումն ապահովելու համար շրջանակներում իրականացվել են. • Թվարկված լաբորատորիաների հիմնման | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 7.3-7.6 կետերի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է. լաբորատորիաների հիմնման մասով <<Աշխատանքները կատարված չեն, կատարողականը 0%>> բառակապակցությունը վերախմբագրվել է <<Լաբորատորիան հիմնված չէ>> բառակապակցությամբ: | Արձանագրությամբ թվով վեց լաբորատորիաների հիմնման կատարողականի գնահատման համար հիմք է ընդունվել Հաշվեքննության ընթացքում, ինչպես նշվել է արձանագրությունում, որպես հաշվեքննության չափանիշ հիմք հանդիսացած ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 20-ի <<2020-2023 թվականների Հայաստանի Հանրապետության չափագիտության ոլորտի զարգացման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> թիվ 1350-Լ որոշման 2-րդ հավելվածի ցանկի 7.1-7.6 կետերը: Նշված կետերով, որպես վերջնական արդյունք պետք է հիմնվեր թվով վեց լաբորատորիա, որից թվով երկուսը՝ 2020-2021 թվականներին, թվով երեքը՝ 2021-2022 թվականներին և թվով մեկը՝ 2023 թվականին: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 01.10.2023 թվականի դրությամբ հիմնվել է ընդամենը թվով երկու լաբորատորիա, իսկ 4 լաբորատորիաները հիմնված չեն: Ինչ վեաբերվում է հաշվեքննության օբյեկտի այն դիտարկմանը, որ հասկանալի և ընդունելի կլիներ գործողությունների համախմբում գնահատել |

| | | |
|---|---|---|
| համար նախատեսված տարածքների վերանորոգում,<br>• 100 կազմակերպությունների կարիքների գնահատում՝ արդյունքում ընտրելով հայաստանյան պահանջարկին համապատասխան սարքավորումներ:<br>• հստակեցվել են սարքավորումները, դրանց քանակը, տեխնիկական բնութագրերը:<br>Ս.թ. հոկտեմբերի 13-ին տեխնիկական բնութագրեր ներառող վերջնական, փոխհամաձայնեցված, համապարփակ փաստաթուղթը, որպես կարիքների գնահատման հաշվետվություն UNIDO-ի կողմից ներկայացվել է նախարարությանը և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ին, ինչից հետո | | կատարված աշխատանքի մասնաբաժինը, ապա հարկ է նշել, որ թե՝ վերը նշված որոշմամբ, և թե որևիցե այլ իրավական ակտով սահմանված չեն լաբորատորիայի հիմնմանն ուղղված աշխատանքներն ու գործողությունների հաջորդականությունը, ինչպես նաև դրանց մասնաբաժինների տոկոսները, որոնց առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ գնահատվեր լաբորատորիայի հիմնմանն ուղղված աշխատանքներն ու գործողությունները: |

| | | |
|---|---|---|
| արդեն վերջինիս կողմից իրականացվում է սարքավորումների գնման և մատակարարման գործընթացները (հիմնավորող տեղեկանքը կցվում է): Գնման գործընթացը մեկնարկվել է UNIDO-ի կողմից և իրականացվում է միջազգային մրցութային ընթացակարգով գործընթացները (գործընթացի իրականացման հիմնավորող տեղեկանքը կցվում է): Ուստի՝ թվարկված լաբորատորիաների սարքավորումների գնման և մատակարարման գործընթացն ապահովվելու է UNIDO-ի կողմից և դուրս է նախարարության իրավասություններից: Նշվածի հիմքով 7.3.-7.6. միջոցառումների կատարողականի գնահատման ընթացքում նախընտրելի | | |

| | | |
|---|---|---|
| կլիներ գործողությունների համախմբում գնահատել կատարված լայնածավալ աշխատանքների մասնաբաժինը՝ համապատասխան %-ային արտահայտությամբ:<br>Բացի այդ հարկ է հաշվի առնել այն, որ որոշմամբ սահմանված ժամկետների վերանայման մասով նախարարության առաջարկ նախագիծը 2023 թվականի հունվարի 23-ին ընդգրկվել է ՀՀ կառավարության Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի օրակարգում (1-ին հարց), սակայն քննարկման արդյունքում որոշվել է հարցը հանել օրակարգից՝ որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության հիմքով (արձանագրության պատճենը տրամադրվել է հաշվեքննողներին): | | |

| | | |
|---|---|---|
| Արդյունքում Որոշման մեջ նախատեսվող փոփոխություններ չեն կատարվել: Ներկա փուլում, հաշվի առնելով սույն հաշվեքննության արդյունքում հաշվեքննողների կողմից արձանագրված անհամապատասխանությունները՝ մեկ անգամ ևս նախագիծը, անհրաժեշտ փոփոխություններով (ներառյալ ժամկետների փոփոխման մասով), սահմանված կարգով կներկայացվի Վարչապետի աշխատակազմ: | | |
| **8.** «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կազմում գործող Արագածի գիտական կենտրոնը որպես COOMET, ԵՄ, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրների չափագիտական կառույցների համար միջազգային չափագիտական, | Ընթացիկ եզրակացությանը կից հավելված 1-ի 8 կետի 7-րդ սյունակը (Արձանագրության Աղյուսակ 2) խմբագրվել է: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները: 2020 թվականին Դրեզդեն քաղաքում COOMET -ի կոմիտեի 31-րդ նիստի ժամանակ տեղի ունեցած խորհրդակցությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, արձանագրություններ կամ այլ փաստաթղթեր չեն ներկայացվել Հաշվեքննություն |

| | | |
|---|---|---|
| գիտական, տեխնիկական համագործակցության կենտրոն դարձնելու վերաբերյալ հայտնում ենք, որ տվյալ թեմայով խորհրդակցությունները սկսվել են դեռևս 2020 թվականին Դրեզդեն քաղաքում COOMET - ի կոմիտեի 31-րդ նիստի ժամանակ: «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ը միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսել է Արագածի գիտական կենտրոնի շենքի և շինությունների վերականգնում, տարածքի վերակառուցման պլանի կազմում, այդ թվում զբոսաշրջության գրավչության տեսանկյունից, գիտական կենտրոնի ենթակառուցվածքների նորոգման և առկա | | իրականացնող մարմնին: ՔՈՎԻԴ համավարակի խոչընդոտ հանդիսանալու հանգամանքը պետք է որ հայտնի լիներ ավելի վաղ (ՀՀ ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 298-Ն որոշումը ընդունվել է 16.03.2020թ.-ին, իսկ Ծրագիրը՝ 13.08.2020թ-ին), հետևաբար, ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերջնաժամկետները հստակեցնելիս, պետք է հաշվի առնվեին այդ հանգամանքները: Նախատեսված աշխատանքները փաստացի կատարված չեն |

| | | |
|---|---|---|
| ալեհավաքների ժամանակակից չափման միջոցներով արդիականացման ծրագիր: 2023 թվականի մայիսի 23-24 -ին Աստանա քաղաքում տեղի ունեցած COOMET-ի կոմիտեի նիստի ժամանակ ՀՀ պատվիրակության կողմից ներկայացվել է տեսահոլովակ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի Արագածի գիտական կենտրոնի մասին և ներկայացվել է համագործակցության առաջարկ: Տեսահոլովակն ու առաջարկը փոխանցվել է անդամ երկրների ներկայացուցիչներին և նիստի ավարտական խմբագրված արձանագրության մեջ արվել է համապատասխան նշում: | | |
| **2. Արդյո՞ք հստակեցվել է այն ճշգրիտ սարքավորումների ցանկը, որոնք անհրաժեշտ են բարեփոխումների ծրագրով նախանշված չափագիտության մակարդակին հասնելու համար, եթե այո, ապա ինչ միջոցներ են ձեռնարկվել դրանք ձեռք բերելու համար** | | |

| | | |
|---|---|---|
| **2.1** Համաձայն «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության՝ Պայմանագրի շրջանակներում մատակարարված բոլոր համակարգիչները թեստավորվել են և գտնվում են աշխատանքային վիճակում: Վերջիններս նախատեսված են ոչ միայն 2 կազմավորված, այլև առաջիկայում բացվող լաբորատորիաների համար: Հետևաբար՝ համակարգիչները կբաշխվեն լաբորատորիաների կազմավորումից հետո: | Փոփոխության անհրաժեշտություն չկա: | Նշված բացատրությունը վերաբերում է չհիմնած (չկազմավորված) թվով 4 լաբորատորիաներին, սակայն այս դեպքում փաստը արձանագրելու նպատակը եղել է այն, որ թվով 10 դյուրակիր համակարգիչները մատակարարվելուց երկու տարի անց դեռևս բաշխված չեն և գտնվում են ՍՉԱՄ համակարգչային բաժնում, որի արդյունքում համակարգիչների համար տրված երեք տարի երաշխիքային ժամկետից երկու տարին արդեն իսկ սպառվել է: Հաշվեքննության իրականացման ժամանակահատվածում նշված լաբորատորիաների հիմնման և գործարկման ժամկետները հստակեցված չեն եղել: |
| **2.2** Արձանագրված անհամապատասխանության շտկման նպատակով կազմվել է զեկուցագիր և ներկայացվել նախարարության գլխավոր քարտուղարին: Վերջինիս կողմից տրված հանձնարարականի հիման | Եզրակացության 3-րդ հարցում չի արտացոլվել Արձանագրության հարց 3-ում արձանագրված՝ Նախարարությանը հատկացված համակարգիչների վերաբերյալ արձանագրումը: | Խմբագրման համար հիմք է հանդիսացել Հաշվեքննության օբյեկտի ս/թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 01/23724 գրությամբ ներկայացված բացատրությունները, համաձայն որի սկսվել է Վարչությանը դյուրակիր համակարգիչների ետ վերադարձման գործընթացը և ըստ էության վերացել է նաև արձանագրված անհամապատասխանության հիմքը: |

| | | |
|---|---|---|
| վրա որոշվել է ապահովել ՀԲ վարկային ծրագրի շրջանակներում նախարարության որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացման ապահովման նպատակով ձեռքբերված դյուրակիր համակարգիչների ետ վերադարձը և դրանց ոլորտային նպատակային օգտագործումը: Այսպիսով, նախարարության այլ ստորաբաժանումներին բաշխված դյուրակիր համակարգիչները համակարգչային մասնագետի կողմից կարգաբերման որոշ անհրաժեշտ աշխատանքներից հետո փոխանցվել են վարչությանը (1 դյուրակիր համակարգիչ գտնվում է ոլորտը համակարգող փոխնախարարի մոտ): Գործընթացի իրականացման առնչությամբ որպես | | |

| | | |
|---|---|---|
| հիմնավորող փաստաթուղթ կցվում է վարչության կողմից ներկայացված զեկուցագիրը և էլեկտրոնային գրագրության հետագծելիության պատճենը: Փաստացի՝ դյուրակիր համակարգիչներով կապահովվի ոլորտային գործառույթների նպատակային կատարումը, ներառյալ՝ միջազգային կազմակերպությունների հետ ոլորտային հանդիպումների և տեսակոնֆերանսներին մասնակցության ապահովում: | | |
| **2.3** Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 1350-Լ որոշման միջոցառումների կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում տրամաչափարկման լաբորատորիաների համար պահանջվող | Փոփոխության անհրաժեշտություն չկա: | Հաշվեքննության օբյեկտը տվյալ դեպքում «ՀԲ» հավանաբար նկատի է ունեցել «ՀՀ ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակը», քանի որ մրցույթի հրավերը https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակվել է վերջինիս կողմից, որում հրավիրող կողմ է նշվել՝ «Նախարարությունը» և «ՀՀ ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակը»:<br>Հարկ է նշել, որ ՀԲ 2011 թվականի գնումների ուղեցույցի հավելված 3-ի հրահանգներ |

| | | |
|---|---|---|
| սարքավորումների, լաբորատորիաների կահույքի ձեռք բերման գնման գործընթացներում կազմված փաստաթղթերում նախարարության կողմից ներառված են եղել ձեռքբերման համար նախատեսվող տեխնիկական բնութագրերն ամբողջությամբ՝ 1 չափաբաժնով Այսպես՝ զանգվածի կամ ջերմային չափումների լաբորատորիաների սարքավորումների ձեռքբերման դեպքում հաշվի առնելով 1 լաբորատորիայի համար սարքավորումների նախատեսված լինելը, ներկայացվել է մեկ ամբողջական սարքավորումների ցանկ: Բացի այդ նախարարության կողմից երբևէ թե տեխնիկական բնութագրերում, թե դրանց կից ներկայացվող | | հայտատուներին բաժնի 2-րդ կետով սահմանված է, որ ծրագրի իրականացման և հետևաբար, ծրագրի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարման պատասխանատվությունը կրում է բացառապես Վարկառուն: Բանկն իր հերթին պարտավոր է, համաձայն պայմանագրի հոդվածների՝ ապահովել կատարված ծախսերի ֆինանսավորումը: Վարկային միջոցների հատկացումն իրականացվում է միայն վարկառուի պահանջով: |

| | | |
|---|---|---|
| պաշտոնական գրություններում չեն նշվել մեկ լաբորատորիայի համար անհրաժեշտ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու վերաբերյալ հիմնավորումներ: Հաջորդիվ, տվյալ մրցույթի՝ մեկ կամ մի քանի չափաբաժիններով անցկացումը ապահովվել է ՀԲ կողմից՝ վերջինիս կողմից հաստատված գնումների ընթացակարգերին համապատասխան, հետևաբար մեկ կամ մի քանի առանձին չափաբաժիններով մրցույթների անցկացումը նախարարության իրավասություններին չի առնչվել: Բացի այդ նախարարության կողմից երբևէ թե տեխնիկական բնութագրերում, թե դրանց կից ներկայացվող պաշտոնական գրություններում չեն նշվել մեկ | | |

| | | |
|---|---|---|
| լաբորատորիայի համար անհրաժեշտ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու վերաբերյալ հիմնավորումներ: Հաջորդիվ, տվյալ մրցույթի՝ մեկ կամ մի քանի չափաբաժիններով անցկացումը ապահովվել է ՀԲ կողմից՝ վերջինիս կողմից հաստատված գնումների ընթացակարգերին համապատասխան, հետևաբար մեկ կամ մի քանի առանձին չափաբաժիններով մրցույթների անցկացումը նախարարության իրավասություններին չի առնչվել: | | |

Վերանայեց՝

Համակարգող ՀՊ-ի անդամ Կարեն Կարապետյան